

---

**ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՏՅԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ\***

**ՀՐԱԶԻԿ ՄԻՐՉՈՅԱՆ**

Կարծում եմ՝ ավելորդ է հիշեցնել, որ ցանկացած գրական ստեղծագործություն հասկանալու և գնահատելու համար անչափ կարևոր է սովյալ երկի կառուցվածքի բացահայտումը: Իսկ ինչ վերաբերում է Նարեկացու Մատյանին, ապա վստահությամբ կարող եմ ասել, որ առանց այդ ինդրի լուծման անհնար է ճիշտ պատասխան տալ նարեկացիագիտական մի շարք հարցերի, որոնցից ամենակարևորը, համոզված եմ, Մատյանի բնույթի որոշումն է. ի՞նչ է այն՝ ամբողջական, միասնական ու միաձուլյ, հետևաբար և ստեղծագործական մեկ ներշնչանքով ստեղծված գեղարվեստական հիասքանչ ե՞րկ, թե՞ տարբեր տարիների, տարբեր առիթներով, իրարից անկախ ստեղծված տարաբնույթ նյութերի ժողովածու՝ զուրկ ներքին կառուցիկությունից: Հարկավ, նոր չէ այս հարցը, այլ առաջին անգամ այն արծարծել է հենց ինքը՝ Նարեկացին՝ Մատյանի հիշատակարանում հայտնելով, որ այն ժամանակ, երբ ընկճվեցին եկեղեցու թշնամիները (նկատի ունի թոնդրակեցիներին), «ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սովիերի արգասաւորի»<sup>1</sup> (այս և հետագա ընդգծումներն իմն են՝ Հ. Մ.): Ներկա դեպքում չեմ ցանկանում մեկ առ մեկ անդրադառնալ բանաստեղծի թվարկած բոլոր գործողություններին, քանզի դա կարող է շատ հեռուն տանել, ուստի կփորձեմ ուշադրություն դարձնել միայն «ստացեալ հիմնեցի», «միագոյ իրի» և «բազմաստեղնեան դրուագս դրութեան» բառակապակցությունների վրա: Այստեղ «ստացեալ»-ը առերևույթ կարող է թողնել ինչ-որ մեկից ինչ-որ բան ստանալու տպավորություն, բայց հարկ է հիշել, որ բառս գրաբարում նշանակել է նաև «հաստել, հաստատել, ստեղծել, առնել և նորոգել. կր. լինել, եղանիլ, ծնանիլ, ըստ հա-

---

\* Հոդվածի հիմքում դրված են վաստակաշատ նարեկացիագետ Հրայր Թամբաջյանի հիշատակին նվիրված «Նարեկացիական ընթերցումներ» Նարեկացիագիտական 2-րդ միջազգային գիտաժողովում (28-29 հոկտեմբերի, 2016 թ.) կարդացված գեկուցման հիմնադրույթները:

<sup>1</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 642: Այսուհետ Մատյանից մեջբերումներ կատարել ենք այս հրատարակությունից տողատակում նշելով միայն **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան և էջը:

մաձայնութեան»<sup>2</sup> իմաստները, այսինքն՝ «ստացեալ հիմնեցի» ասվածը պետք է հասկանալ հենց հիմնեցի, ստեղծեցի իմաստով: Ուշագրաւ է, որ Ստ. Մալխասյանցն իր բառարանում առաջին տեղում դնում է հենց «հաստատել, հաստել, ստեղծել», իսկ ապա՝ «4. գոյացնել, արտադրել»<sup>3</sup> իմաստները: Այսպիսով, իրականացնելով թվարկված կառուցողական իրարանման, բայց և տարբեր բոլոր գործողությունները, բանաստեղծը փաստում է, որ այդ ամենը կատարել է **«ի հրաշակերտութիւն միագոյ իրի»**, այսինքն՝ ստանալու համար անպայման միաձույլ ու կառուցիկ հրաշալի ստեղծագործություն, բայց, այդուհանդերձ, այն նաև բազմաստեղն կամ բազմաճյուղ է: Փաստորեն բանաստեղծը, ինչպես ամեն մի հեղինակ, ամենից լավ իմանալով իր կատարած աշխատանքն ու ճիշտ գնահատելով ստացված արդյունքը, Մատյանը որակում է որպես բազմաստեղն, բայց և միաձույլ «հրաշակերտութիւն», որը, իբրև Մատյանի ստեղծման գործընթացի և ստացված արդյունքի հեղինակային միանգամայն սթափ ու իրատեսական գնահատություն, կարծում եմ, ոչ մի դեպքում իրավունք չունենք անտեսելու: Մակայն պարզվում է, որ դարեր շարունակ, ցավոք, ինչ-ինչ պատճառով ու նկատառումով, սկսած վերնագրից, անտեսվել է Մատյանի մասին հեղինակային պատկերացումը, որի հետևանքով ներկայումս նարեկացիագետներից ոմանք ոչ միայն մերժում են Մատյանի ներքին միաձույլ կառուցվածքը, այլև նույնիսկ ավելորդ են համարում նրանում փնտրել «կառուցվածքային որևէ ընդհանուր սկզբունք»: Օրինակ՝ Աննի և Ժան-Պիեռ Մահեները գրում են. «Հա՛րկ է արդյոք կառուցվածքային որևէ ընդհանուր սկզբունք փնտրել **այս ժողովածուի մեջ**, որտեղ տեղ են գտել այնքան բազմաբնույթ աղոթքներ՝ **ստեղծված տասնյակ տարիների ընթացքում**: Յուրաքանչյուր գլուխ կարող է ընթերցվել առանձին և ինքնուրույն խորհրդածության առարկա դառնալ որոշակի հանգամանքների բերումով կամ թելադրանքով: Մակայն ինչպե՛ս գտնել ընդհանուր մի գիծ **այս պոեմի մեջ**, որ գուրկ է թե՛ **դիպաշարից**, թե՛ **փաստարկների շարունակական գծից**, որի բանաստեղծական արվեստը հիմնված է կրկնության վրա»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, հարգարժան հեղինակները, Մատյանը միանշանակ դիտելով «ժողովածու», ըստ այդմ նրա պարունակած նյութերը կամ ավելի ստույգ՝ գլուխները, որ բանաստեղծն անվանել է «Բան» կամ «Դրուագ», համարում են իրարից անկախ ու ինքնուրույն,

<sup>2</sup> **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմէլեան, Հ. Սկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հատոր երկրորդ, Եր., 1981, էջ 742 (այսուհետ՝ ՆՀԲ):

<sup>3</sup> **Ստեփան Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հատոր չորրորդ, Եր., 2010, էջ 261:

<sup>4</sup> **Աննի Մահե և Ժան-Պիեռ Մահե**, Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, ֆրանսերէնից թարգմանեց Շուշանիկ Թամրազյանը, Եր., 2004, էջ 272: Ի դեպ՝ տողատակի ծանոթագրության մեջ կարդում ենք. «Գուցեն 983 (? 965) թվականից մինչև 1002-ը»: Այսինքն՝ հեղինակների կարծիքով, Մատյանը, հնարավոր է, ստեղծվել է 19, չի բացառվում նաև... 37 տարում գրված բազմաբնույթ աղոթքներից:

որոնք կյանքի են կոչվել 19, գուցե 37 տարում: Իմ կարծիքով, նման մոտեցումը հետևանք է այն բանի, որ ժամանակին, դժվար է ասել, թե երբ, որտեղ, ով և ինչու, հեղինակային «Մատեան ողբերգութեան» վերնագիրը դարձրել է «Աղօթից գիրք»: Մինչդեռ քննական բնագրի աշխատասիրողների պնդմամբ, ձեռագրերի ճնշող մասի մեջ ««աղօթք» անվանումը բացակայում է»<sup>5</sup> Մատյանի վերնագրում: Ճիշտ է՝ սկսած XIX դարի 40-ական թվականներից «Մատեան ողբերգութեան» հեղինակային վերնագիրը դառնում է սովորական և ընդունված «գրեթե բոլոր տպագիրներում»<sup>6</sup>, բայց որովհետև դարավոր ավանդույթը, ցավոք, ամուր նստվածք է տվել մարդկանց գիտակցության մեջ, ըստ այդմ նրանք կա՛մ չեն ցանկանում, կա՛մ պարզապես չեն կարողանում ազատվել նախկին կարծրատիպերից: Այդ է պատճառը, որ հարգարժան նարեկացիագետները մեկ այն անվանում են «ժողովածու», մեկ՝ «պոեմ», որոնք ըստ էության փոխբացառող հասկացություններ են և ո՛չ կիրառելի նույն ստեղծագործության համար:

Մինչդեռ, իմ խորին համոզմամբ, Մատյանի նման բանաստեղծական վիթխարի ստեղծագործությունը, որը հայ «բանաստեղծության ամենածավալուն երկն է»<sup>7</sup>, ոչ մի կերպ չէր կարող դիմանալ հազարամյա ավերիչ ցնցումներին, եթե չունենար ոչ այնքան արտաքին, որքան ներքին ամրակուր կառուցվածք: Քանի որ ներկա դեպքում ինձ հետաքրքրում է հատկապես վերջինս, ուստի չեմ ցանկանում անդրադառնալ նրա արտաքին կառուցվածքին, որը, ինչպես վաղուց ցույց էմ տվել<sup>8</sup>, մասամբ խախտված է: Պարզապես, ի հավելումն ներկայացված փաստերի, կցանկանայի հիշեցնել միայն, որ համաձայն քննական հրատարակության՝ Մատյանի Ա գլուխն ունի միայն «Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ», իսկ Բ-ԴԱ և ԴԵ, ԴԵ գլուխները «Վերստին հաւելում կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ», մինչդեռ ԴԲ և ԴԳ գլուխները չունեն այդ ընդհանուր վերնագիրը, այլ համապատասխանաբար կոչվում են «Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութեան, աղաչանս եղեալ ընդ կերպարանս թարգմանութեանն» և «Աղաւթք թարգմանաւրէն վասն սրբալոյս իւղոյն միւռոնի»: Այստեղից հետևում է, որ Ճիշտ կլինի այդ գլուխները տանել վերջ, իսկ ԴԵ և ԴԵ գլուխները համարակալել ԴԲ և ԴԳ, որով վերականգնված կլինի Մատյանի հեղինակային կառույցի իրական տեսքը: Ճիշտ է՝ այս երկու գլուխների (ԴԵ և ԴԵ) դասավորության հարցում ևս գրականության մեջ կան տարբերություններ, բայց այստեղ չեմ ցանկանում անդրադառնալ դրանց:

<sup>5</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, էջ 973:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> **Պարույր Սևակ**, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Եր., 1974, էջ 247:

<sup>8</sup> Տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 95:

Մանրագնին ուսումնասիրությունից պարզվում է, որ Բ-ՂԱ, ՂԴ և ՂԵ գլուխներում կրկնվող «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ» վերնագիրը, լինելով յուրատեսակ վարագույր, ըստ էության ծածկում ու թաքցնում է Մատյանի ներքին կառուցվածքը, ուստի վերջինս բացահայտելու համար հարկավոր է նախ և առաջ բացել այն և տեսնել, թե յուրաքանչյուր գլխում ինչպես է սկսվում բուն նյութի շարադրանքը. արդյոք կա՞ գլուխների միջև ինչ-որ կապ ու միասնություն, թե՞ դրանք գոյում են որպես իրարից անկախ ու ինքնուրույն միավորներ: Կատարելով այդ պարզ գործողությունը՝ անմիջապես ակնհայտ է դառնում, որ իբրև հայոց լեզվի ամենից «շոայլ սերմնացան եւ... բարձրարվեստ ճարտարապետ»<sup>9</sup> Նարեկացին ոչ միայն լավագույնս է օգտագործել մայրենի լեզվի շինանյութ-բառազանձը՝ անձամբ էապես հարստացնելով այն<sup>10</sup>, այլև այդ շինանյութն իրար կապելու և կապակցելու տեխնիկան ու տեխնոլոգիան:

Թվում է՝ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ մայրենի լեզվի խոսքի մասերից կապակցական-կառուցողական ամենամեծ գորությունն ունեն շաղկապները, որոնք թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում խաղացել ու շարունակում են խաղալ նույն դերը: Այդ է պատճառը, որ գրաբարի և աշխարհաբարի շաղկապներն ուսումնասիրողները տալիս են գրեթե նույնանման սահմանում: Օրինակ՝ Պ. Շարաբխանյանը գրաբարի համար շաղկապներ է համարում այն բառերը, «որոնք կապակցում են նախադասության համագոր անդամներ, նախադասություններ, **խոսքի առանձին հատվածներ ու պարբերություններ**՝ դրանց միջև արտահայտելով զանազան հարաբերություններ»<sup>11</sup>, իսկ ըստ Գ. Գարեգինյանի՝ աշխարհաբար հայերենում շաղկապներ են համարվում «այն սպասարկու բառերը, որոնք որոշակի իմաստային հարաբերություններով կապակցում են նախադասության համագոր անդամներ ու բարդ նախադասության բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև **ավարտված նախադասություններն ու խոսքի տարբեր հատվածները**»<sup>12</sup>: Ավելին, ասում է նա, շաղկապները, «հանդես գալով նախադասության համագոր անդամների, բառակապակցությունների, համադաս նախադասությունների, **ինչպես նաև խոսքի տարբեր հատվածների ու պարբերությունների շաղկապման դերով**»<sup>13</sup>, նշում են նրանց միջև իմաստային տարաբնույթ հարաբերություններ ու երանգներ: Արդ, եթե շաղկապները կապակցում են նաև խոսքի առանձին կամ տարբեր հատվածներ ու պարբերություններ, ապա,

<sup>9</sup> Արշալոյս Ղազինեան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 241:

<sup>10</sup> Այդ մասին տե՛ս Զ. Ղ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Եր., 2006:

<sup>11</sup> Պ. Ե. Շարաբխանյան, Գրաբարի շաղկապները, Եր., 1960, էջ 15:

<sup>12</sup> Գ. Լ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 40:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 94:



գլուխներինը: Օրինակ՝ 23-38 գլուխները (16) բոլորն էլ սկսվում են շաղկապով, մինչդեռ ոչ շաղկապներով սկսվող առաջին մեծ հատվածը կազմում է 5 գլուխ (40-44), իսկ հաջորդը (89-95)՝ ընդամենը 7 գլուխ:

Ասենք նաև, որ շաղկապների կապակցող գործառույթից բանաստեղծը լավագույնս է օգտվել նաև գլուխների ներսում ենթագլուխների միջև կապ հաստատելու և ըստ այդմ բանաստեղծական կառույցն ավելի միաձույլ դարձնելու նպատակով: Դրանում համոզվելու համար բավական է ասել, որ Մատյանի 453 ենթագլուխներից\* (հնարավոր է՝ չնչին տարբերությամբ) 274-ը սկսվում է շաղկապով կամ շաղկապական բառով, որոնց մեջ նորից գերակշռում է «Եւ արդը» (65), իսկ երկրորդ տեղում է «Արդը» (38): Համեմատության համար ասենք, որ, օրինակ Եղիշե Չարենցի «Կոմիտասի հիշատակին» պոեմի 142 գլուխներից շաղկապով և շաղկապական բառերով են սկսվում շուրջ 47-ը, իսկ Պարույր Սևակի «Անլուելի գանգակատուն» պոեմի 46 դողանջ-գլուխներից՝ 16-ը:

Բացի Մատյանի գլուխների միջև առկա ձևական-շարահյուսական կապերից՝ բանաստեղծն ամեն կերպ ջանացել է հաստատել նաև բովանդակային կապեր՝ անկախ այն բանից, թե ինչպես է սկսվում տվյալ գլուխը՝ շաղկապով, թե՛ առանց շաղկապի: Օրինակ՝ թեև Ժ գլուխն սկսվում է «Եւ արդ» շաղկապով, բայց և այնպես ամբողջի հետ տվյալ գլխի կապն ավելի ամրապնդելու համար 23-24 տողերում ասում է. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց // Չհաւատոցն շինուած կառուցից»: Մեկ ուրիշ անգամ (Բան ԼԸ) բանաստեղծը իր խոսքն սկսում է հետևյալ ձևով.

Բայց արդ, որպէս **երբեմն յայլ ընթերցուածի,**

**Որ ի սկզբնաւորականացն կարգի,**

Զմեղանացն զխաւարային ծնունդս զլիաւորացն

Աւրինացն մարմնականացն անդամոց գրեցի,

Յորոց տիրեցայ ժառանգս մահու, -

**Նոյնպէս եւ յայսմ սահման ընտրութեան բանի**

Զլուսածնելոցն զազատարարն արե՛նս հոգւոյն կենաց, որ ի Տէր Յիսուս,

Յիշատակեցից նուագս ի յոգունց,

Իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ:

Ինչպես իրավացիորեն նկատել են քննական բնագրի աշխատասիրողները, «**յայլ ընթերծուածի**» ասելով՝ բանաստեղծը միանշանակ «նկատի ունի Մատյանի Զ գլուխը, ուր թվարկվում են գլխավոր մեղքերն իրենց ծնունդներով»<sup>14</sup>: Եթե այս դեպքում բանաստեղծը յուրատեսակ կամուրջ է գցում մատյանի 6-րդ և 38-րդ գլուխների միջև, ապա մեկ այլ դեպքում ավելի է մեծանում կամրջի թռիչքը: Ըստ այդմ՝ ավար-

---

\* Հաշվարկը կատարել ենք ըստ նշված քննական հրատարակության. տարբեր հրատարակություններում ենթագլուխների թիվը մասամբ տարբեր է:

<sup>14</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, էջ 1046:

տելով Բան ՀԵ-ում (75) եկեղեցու մասին իր պատկերացումների ծավալուն շարադրանքը, վերջում հարկ է համարել հավելելու. «Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն, եւ այս ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն»: Ուշագրավ է, որ քննական բնագրի աշխատասիրողները այս դեպքում դրսևորում են որոշ անհետևողականություն, քանզի մեկ ասում են, որ «Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն» ասելով նկատի ունի Մատյանի ԼԴ բանը (տե՛ս էջ 1089), իսկ մեկ ուրիշ անգամ կրկնում են Գ. Ավետիքյանին՝ ասելով, որ նկատի ունի նույն 75-րդ գլխի առաջին մասը (տե՛ս էջ 1094): Այստեղ չեմ ցանկանում մանրամասն փաստարկել իմ տեսակետը, քանի որ տարիներ առաջ, զբաղվելով Մատյանի կառուցվածքի խնդրով, ի տարբերություն Գ. Ավետիքյանի, որ կարծում էր, թե ՀԵ գլուխը պետք է հաջորդեր ԼԴ-ին, եզրակացրել եմ, որ Մատյանի «75-րդ գլուխը, ունենալով դավանաբանական բնույթ, նույնքան անհրաժեշտ ու տրամաբանված է նրա գոյությունը Մատյանի երկրորդ մասում, որքան ԼԴ գլխինը՝ առաջին մասում»<sup>15</sup>: Քանի որ մնում եմ նույն կարծիքին, ուստի գտնում եմ, որ «Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն» ասելով նկատի է ունեցել ոչ թե նույն ՀԵ գլխի առաջին մասը (տ. 1-104), այլ միայն ու միայն ԼԴ գլուխը, որի 33-34 տողերում գրել է. «Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգի վերանկարէ»<sup>16</sup>:

Մատյանի տարբեր գլուխների միջև բանաստեղծը բովանդակային կապեր հաստատում է ամենատարբեր ու բազմազան ձևերով՝ հաճախ նույնիսկ ոչինչ չասելով այդ մասին: Օրինակ՝ Մատյանի Զ բանի սկզբում արծարծելով իր ստեղծագործության նպատակի հարցը՝ բանաստեղծն ասում է, որ ցանկանում է «զամբարեալ շարաւ մահացու վիրիս // Խարանաւ բանիս արտաքս հերքել // Եւ կամ զծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս, // Իբր տաղտկացուցանողական հնարաւորութեամբ, // Մատնամուխ զգուանաւք փսխել»: Ըստ այդմ, շարադրելով Մատյանի ավելի քան 2/3 մասը, այսինքն՝ 59 գլուխ հետո, երբ ավարտել է ամենահիմնական ասելիքը և հայտնել ինքնակենսագրական շատ կարևոր տեղեկություններ, բան ԿԵ-ում արդեն միանշանակ ազդարարում է, որ «Զդառնութեանս մաղձ ժայթքեցի», «Զամբարեալ թարախ վիրիս քամեցի», «Զմրուրն մահու **փսխեցի**», // Զպայարս հոգույս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի»: Կարծում եմ՝ այնքան ակնհայտ է 6-րդ և 65-րդ գլուխների միջև եղած կապը, որ նույնիսկ ավելորդ է դրա մասին խոսել, քանզի մեն-միայն «**փսխել**» բառի գործածությունն արդեն վկայում է դրանց իրար հետ ունեցած անքակտելի կապի և Մատյանի համար ու նրա ստեղծման ըն-

<sup>15</sup> **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու), էջ 85:

<sup>16</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, էջ 386:

թացքում գրված լինելու մասին: Ասես չբավարարվելով այսքանով՝ նույն գլխում Աստծուց խնդրում է, որ «**նուագուք այսր մատենի**» ամոթի անարգանքով լցնի «գղեման սատանայի», իսկ իր ամոթահար երեսը գորացնի խաչի նշանով: Մոտավոր հաշվարկով այսպիսի վկայություններ Մատյանի մասին առկա են շուրջ 90 գլուխներում: Իսկ դա նշանակում է, որ այդ գլուխներն ստեղծվել են հենց Մատյանի համար ու նրա արարման ընթացքում:

Ի հաստատումն իմ այս հետևության՝ հարկ եմ համարում հավելել, որ Մատյանի գլուխների միջև և ընդհանրապես ամբողջ կառույցի համար որպես ամրացնող ու ամրակցող կամ գուտ շինարարական եզրույթով արտահայտած՝ ցեմենտող ուժ հանդես է գալիս նաև հուզական-զգացական տարրը, որով ներծծված է ամբողջ Մատյանը:

Գաղտնիք չէ, որ նարեկացիագիտության մեջ վաղուց շրջանառվում է այն կարծիքը, որ տրամադրության, րստ էության նաև լեզվական էական տարբերություն է նկատվում բանաստեղծի տաղերի ու Մատյանի միջև: Օրինակ՝ Պ. Խաչատրյանի համոզմամբ, բանաստեղծի լավագույն տաղերում «ակնհայտ միտում կա դեպի ժողովրդական բառ ու բանը, կենդանի խոսքի երանգները, նկատելի են տաք գույները, կա գարնան գարթոնքի հրճվանք, մինչդեռ Նարեկում պատկերները մեզ տանում են դեպի վերացական ոյորտ, երանգները տեղի են տալիս, առկա են գերազանցապես երկու իրարամերժ գույներ՝ սևը իբրև մռայլի, սպիտակը, յուլսը իբրև աստվածային էության դրսևորում»<sup>17</sup>: Մա նշանակում է, որ Մատյանը գրելուց առաջ բանաստեղծն այնպիսի հոգեկան ցնցումներ է ունեցել, որոնք արմատապես փոխել են նրա տրամադրությունն ու հուզական աշխարհը, ուստի Մատյանը գրելիս լեզվական նախկին բազմագույն արտահայտչամիջոցներից մնացել են ընդամենը երկու գույն՝ սևն ու սպիտակը, առաջինը որպես երկրային տխուր ու մռայլ կյանքի, իսկ երկրորդն իբրև երկնային յուսավոր աշխարհի պատկերման միջոց: Իհարկե, բանաստեղծը կարողանում է դրանցից յուրաքանչյուրի մեջ այնքան բազմազան նրբերանգներ ու անցումներ տեսնել, որ նույնիսկ միագույնի սահմաններում կերտում է բազմերանգ պատկերներ: Փաստը մնում է փաստ, որ բանաստեղծն իր հանճարեղ ստեղծագործությունը վերնագրել է ոչ այլ կերպ, քան «Մատեան ողբերգութեան», որի սկզբից մինչև վերջ ամենատարբեր ձևերով միայար հնչում է հենց ողբերգության գաղափարը: Իմ խորին համոզմամբ, այդ գաղափարի ամենահուզական-զգացական դրսևորումը տեսնում ենք Մատյանի առաջին իսկ տողում՝ «Չա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի»: Ճիշտ է՝ Մատյանում տեղ են գտել նաև ավելի դառնաշունչ ու ողբերգական զգացումներ, բայց դրանք չեն դառնում տիրապետող, այլ ինչպես հայտնվում են անսպասելիորեն,

<sup>17</sup> **Պողոս Խաչատրյան**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 75:

այնպես էլ անհետանում են աննկատելիորեն: Օրինակ՝ դժվար է պատկերացնել բանաստեղծին համակած դառն զգացումների ծանրության այն աստիճանը, որի ազդեցության տակ արդեն կյանքի մայրամուտին մոտեցող բանաստեղծը Մատյանի հենց սկզբում (Բան Դ, տ. 39-52) գրել է.

Եւ արդ, ո՛չ ապաքէն ըղձալի էր,  
Ըստ Գրոյն կանխութեան նախաձայնելոյ,  
Ո՛չ ստեղծանիլն երբէք յարգանդի  
Եւ ո՛չ նկարիլն յորովայնի,  
Ո՛չ ի ծնունդ յառաջագայիլ  
Եւ ո՛չ ի լոյս կենաց հասանիլ,  
Ո՛չ ի թիւս մարդկան գրիլ  
Եւ ո՛չ ի հասակ աճման ամբառնալ,  
Ո՛չ ի պատկեր գեղոյ զարդարիլ  
Եւ ո՛չ բանիւ հանդերձաւորիլ,  
Քան ընդ այսպիսեաց սաստկագունից  
Եւ սարսափելեաց ըմբռնիլ պարտուց,  
Որ եւ ոչ վիմաց կարծրութիւն բերէ,  
Թող թէ մարմնոյ լուծականութիւն:

Իսկ Բան ԻԲ-ում ավելի սաստկացնելով իր ասելիքը՝ գրել է.

Ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս,  
Աշխարեմ գստինսն, որ դիեցուցին,  
Ընդէ՛ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթին ձգեցի,  
Եւ զիս՝ ող ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեան ջամբեալ  
մատուցաւ:

Բարեբախտաբար, նման տրամադրությունն անհամեմատ կարճատև ու անցողիկ է, մինչդեռ ամբողջ Մատյանը, հեղինակի իսկ հավաստամբ, համակված է հենց առաջին տողում դրսևորված թախծությամբ ու հեծեծանքով: Ասվածի լավագույն հաստատումը գտնում ենք Բան ԾԳ-ի հետևյալ (29-32) տողերում.

Քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից,  
Յարմարեալ դարձեալ ի նիւթս բանիս՝  
**Զտառ ողբերգութեան այսր մատենի**  
**Լցից թախծութեամբք եւ հեծեծանաւք:**

Ահա հենց այս չափանիշով մոտենալով Մատյանին՝ առաջին հայացքից նույնիսկ այն տպավորությունն է ստեղծվում, թե բանաստեղծը բազում տասնյակ գույններում ասես կրկնում է առաջին տողը, բայց մանրագնին քննությունն ի հայտ է բերում միանգամայն այլ պատկեր. պահպանելով նույն ոգին ու շունչը՝ բանաստեղծը գտնում է նույնը արտահայտելու նորանոր ձևեր ու միջոցներ: Համեմատության համար բերենք մի քանի օրինակ.

- Բան Ա, տ. 1           **Չա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի,**  
 Բան ԺԳ, տ. 45       Լո՛ւր պաղատանաց գոչման **հեծութեանս**, որ կարդանս առ քեզ,  
 Բան ԺԸ, տ. 118      Լո՛ւր պաղատանացս արգահատութեան **սրտիս վտանգի,**  
 Բան Խ, տ. 2           Լո՛ւր հառաչանաց **ձայնիս վտանգի,**  
 Բան ԾԳ, տ. 43       Լո՛ւր **լռութեան սրտիս**, տեր Յիսուս,  
 Բան ՂԱ, տ. 104      Լո՛ւր խնդրուածոց **ամենահառաչ ձայնիս հեծութեան,**  
 Բան ԼԲ, տ. 78       Նայեա՛ ի պաղատանս **հառաչման ձայնի** քոյոց ծառայից:

Կարծում եմ՝ այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ Մատյանը իսկապես լի է առաջին տողի **թախծության** ու **հեծեճանքի** զգացումով, որով փաստվում է, որ տվյալ գրույթները գրվել են հենց Մատյանի համար ու այն արարելու ընթացքում և ոչ թե տարիներ ու տասնամյակներ առաջ: Բերված օրինակներից, կարծում եմ, առանձնահատուկ ուշադրության է արժանի բանաստեղծի խնդրանքը Հիսուսին՝ լսել ոչ միայն սրտի հեծեճանքներն ու աղերսանքները, այլև... **լռությունը:**

Վերջապես, Մատյանի ներքին կառուցվածքի և ամենից առաջ նրա գրույթների միջև առկա սերտ կապի մասին հետաքրքիր տեղեկություններ ենք ստանում նաև նրանում գործածված նորաբանությունների քննության ճանապարհով: Ժամանակին «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային աշխատությունից վերցնելով միայն Նարեկացու Մատյանով վկայված բառերը՝ ստացվեց ավելի քան 800 բառից բաղկացած ցանկ, որը որպես առանձին հոդված հրապարակեցի «Նարեկացու բառաշխարհը» վերնագրով<sup>18</sup>: Այն արժանացավ լեզվաբանների<sup>19</sup> և գրականագետների<sup>20</sup> ուշադրությանն ու դրվատանքին: Մույն հոդվածի կապակցությամբ մանրագնին ուսումնասիրելով հիշյալ բառացանկը՝ պարզվեց, որ դրանում առկա են երկու տեսակի նորաբանություններ. ա) միայն մեկ գլխում գործածված և բ) մեկից ավելի գրույթներում հանդիպող բառեր: Դրանց գերակշիռ մասը իհարկե, առաջին խմբի բառերն են (ավելի քան 700), բայց քիչ չեն նաև երկրորդ խմբին պատկանողները (95): Ընդ որում՝ վերջիններիս մեծ մասը (68) գործածվել է երկու, 20-ը՝ երեք, 4-ը՝ չորս գրույթներում, իսկ մնացյալ 3-ից 1-ը գործածվել է 12 գրույթներում: Հետաքրքիր է, որ վերջինս առաջին անգամ գործածվել է Ա գլխում, իսկ երկու անգամ՝ ՂԳ գլխում: Սսենք նաև, որ կա դեպք, երբ միևնույն գլխում վերագործածվում են նախկինում մեկ տասնյակից ավելի գրույթներում առաջին անգամ կիրառված նորաբանություններ: - Նորից խոսքը վերաբերում է ՂԳ գլխին: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում ՂԳ գլխում գործածված նորաբանություններին, որով-

<sup>18</sup> Տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացու բառաշխարհը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, № 1, էջ 85-114:

<sup>19</sup> Տե՛ս **Գ. Մ. Մանուկյան**, «Նարեկացու բառաշխարհը» հրապարակման քննական վերլուծություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, № 1, էջ 84-94:

<sup>20</sup> Տե՛ս **Հ. Թամրազյան**, Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի Սուրբ կաթողիկէ եկեղեցի» երկը, «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 604:

հետև նարեկացիագետներին քաջ հայտնի է, որ ՂԲ և ՂԳ գլուխների տեղի, բովանդակության ու հեղինակային պատկանելության մասին արտահայտվել են իրարամերժ տեսակետներ, ուստի թարգմանիչներից շատերը դրանք դուրս են թողել կամ տարել են վերջ ու հրատարակել որպես հավելված և այլն: Մինչդեռ ներկա բառաքնությունը գալիս է անառարկելիորեն հաստատելու, որ դրանք անպայման պետք է լինեն Մատյանի վերջում, իսկ ներկայիս ՂԴ և ՂԵ գլուխները տարվեն առաջ ու դառնան համապատասխանաբար՝ ՂԲ և ՂԳ գլուխներ: Բանն այն է, որ ՂԳ գլխում բանաստեղծը գործածել է ավելի քան 90 նորաբանություններ, որոնցից ոչ մեկը չի հանդիպում ՂԴ և ՂԵ գլուխներում: Եվ դա այն դեպքում, երբ նորաբանությունների տեսակետից ՂԳ գլուխն ամենից հարուստն է, այդուհանդերձ դրանում հանդիպում են նաև Ղ, ՂԱ գլուխներում, անգամ ՂԲ գլխում առաջին անգամ գործածված նորաբանություններ:

Վերադառնալով մեկից ավելի գլուխներում գործածված նորաբանություններին՝ կարող ենք ասել, որ դրանք առաջին անգամ գործածվել են ընդամենը 48 գլուխներում, իսկ ապա վերագործածվել 27 գլուխներում: Այստեղից հետևում է, որ շնորհիվ խնդրո առարկա 95 նորաբանությունների յուրատեսակ կապ է ստեղծվում Մատյանի 75 գլուխների միջև և փաստվում, որ դրանք գրվել են հենց Մատյանի ստեղծման ժամանակ ու այդ նպատակով\*: Ինչ վերաբերում է մնացած 20 գլուխներին, ապա Մատյանի հետ դրանց ունեցած կապը պարզելու համար շատ կարևոր է իմանալ, թե նախ՝ ինչպես է սկսվում դրանց շարադրանքը, այսինքն՝ շաղկապներո՞վ, թե՞ այլ բառերով, երկրորդ՝ ունե՞ն բովանդակային ընդհանրություն այլ գլուխների հետ, թե՞ ոչ, երրորդ՝ հուզական-զգացական տեսակետից ի՞նչ հարաբերության մեջ են Մատյանի առաջին գլխի առաջին տողի հետ, չորրորդ՝ կա՞ն այդ գլուխներում գործածված նորաբանություններ, թե՞ ոչ: Չէ՞ որ Նարեկացու բառաստեղծական արվեստը, որ հատուկ է նրա մատենագրական ողջ ժառանգությանը, կատարելության է հասել հենց Մատյանում: Ի պատասխան այս հարցերի՝ կարող եմ փաստել, որ դրանցից 11-ն սկսվում է շաղկապով ու շաղկապական բառով, մեծ մասը բովանդակությամբ ու հուզական-զգացական տեսակետից սերտորեն կապված է այլ գլուխների և հատկապես առաջին գլխի առաջին տողի հետ, և, վերջապես, նորաբանություններ չունեն ընդամենը ԽԱ, ԽԲ, ԿԵ և ՁԹ գլուխները: Սրանցից ԿԵ գլուխը թեև չունի նորաստեղծ որևէ բառ, բայց նախ՝ սկսվում է «Եվ արդ» շաղկապով, երկրորդ, ինչպես ցույց տվեցինք վերը, այնպես է կապված Ձ գլխի հետ, որ կարելի է համարել նրա օրգանական շարունակությունը:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել հետևյալը:

---

\* Ճիշտ է՝ ասացինք, որ ՂԲ և ՂԳ գլուխներն ստեղծվել են փոքր-ինչ հետո, բայց անպայման որպես Մատյանի նախորդ 93 գլուխների շարունակություն, ուստի նրանցում լայնորեն օգտագործվել են նախորդ գլուխներում առկա բազում նորաբանություններ:

Նարեկացու Մատյանի շարահյուսության, բովանդակության, հուզական-զգացական տրամադրության և բառաստեղծական արվեստի մանրագնին քննությունից պարզվում է, որ մտահղանալով այն ստեղծելու գաղափարը՝ բանաստեղծը, իր իսկ վկայությամբ, կատարելով բազմազան ու բազմապիսի գործողություններ, կարողացել է միանգամից ստեղծել միաձույլ ու ամբողջական, բայց և բազմաճյուղ-բազմաստեղն հրաշակերտություն, ուստի այսուհետև այն պետք է ուսումնասիրվի ոչ թե որպես տասնյակ տարիների ընթացքում իրարից անկախաբար գրված աղոթքների ժողովածու կամ հավաքածու, այլ իբրև ամբողջական ու միաձույլ գրական-գեղարվեստական հանճարեղագույն ստեղծագործություն: Այո, նրանում կան նաև 2-3 փոքրիկ գլուխներ (ԽԱ, ԽԲ, ՁԹ՝ բոլորը միասին ընդամենը 72 տող ընդհանուր ծավալով, որը կազմում է Մատյանի տողերի ընդհանուր թվի  $\approx 0,72$  %-ը), որոնք կարող են նախօրոք ստեղծված լինել որպես Աստծու հետ զրուցելու նախավարժանքներ: Հնարավոր է՝ բանաստեղծը դրանք զետեղել է Մատյանում միայն ու միայն կորստից փրկելու նպատակով, քանզի որակական տեսակետից ըստ էության ոչինչ չեն հավելում:

**Բանալի բառեր** - *Մատյան, ներքին կառուցվածք, արտաքին կառուցվածք, միաձույլ, բազմաճյուղ, կառուցիկ ստեղծագործություն*

**ГРАЧИК МИРЗОЯН – Проблема внутреннего строения «Книги» Григора Нарекаци.** – В статье рассмотрена точка зрения, согласно которой шедевр Нарекаци представляет собой сборник молитв; её десятилетиями независимо друг от друга высказывали разные авторы. Обстоятельный анализ синтаксиса «Книги скорбных песнопений», её содержания, эмоционально-чувственного настроения и словотворческого искусства позволяет заключить, что, развивая замысел «Книги», поэт создавал слитное, целостное, но при этом сложно выстроенное, широко разветвлённое произведение. Автор также не исключает, что в книге могут быть две–три малые главы (например, 41, 42, 89), написанные как молитва в преддверии разговора с Богом. Вероятно, поэт включил их в «Книгу», чтобы уберечь от утраты, поскольку, по сути, они ничего в смысле качества «Книге» не добавляют.

**Ключевые слова:** *«Книга скорбных песнопений», внутреннее строение, внешнее строение, слитное, разветвлённое, гармоничное произведение*

**HRACHIK MIRZOYAN – The Issue of the Inner Structure of Narekatsi's Book of Lamentations.** – The opinion that Grigor Narekatsi's masterpiece was written as a collection of prayers independently from each other within decades, is disputed in the article. The detailed analysis of the syntax, content, emotional mood and the art of word formation of the book leads the author to the conclusion that the poet, developing the idea of the Book of Lamentations, created a complete and monolithic, but at the same time a multi-branch wonder. The author doesn't exclude that there may be 2 or 3 small chapters in the book (e.g. chapters 41, 42, 89) being written as preliminary training prayers for talking to God. Perhaps the author had inserted them in the Book for the purpose of saving them since they do not actually add to the quality of the Book.

**Key words:** *Book, internal structure, external structure, monolithic, multi-branch*